

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՆԻԶՄ

Հողվածում պարզաբանվում է հիշողության տեղն ու դերը մարդակային գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Կարևորվում է անցյալի ժառանգության պահպանումը, սերունդների մշակութային արժեքների վերարտադրությունն ու փոխանցումը: Հատկապես ուշադրություն է դարձվում սոցիալական հիշողությանը, որը հանդես է գալիս որպես մարդու մշակութային և սոցիալական գործունեության եղանակ: Լուսաբանվում է անհատական, կոլեկտիվ և պատմական հիշողությունների համատեղ աշխատանքը հասարակության մեջ: Շեշտադրվում է այն հանգամանքը, որ ճշմարիտ սերնդափոխության հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե մարդու հարափոփոխ անձնական նախասիրությունները, այլ նախնիներից ժառանգած կենսափորձն ու համամարդկային արժեքները: Հիշողությունն անցյալը դարձնում է իրական արժեք, մեր կյանքի նշանակալի մաս, կարևորագույն հասարակական իրադարձությունների առաջ մղող, շարժիչ ուժ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ սոցիոմշակութային արժեքներ սոցիալական հիշողություն, ժառանգականության մեխանիզմ, անհատական հիշողություն, կոլեկտիվ հիշողություն, արժեհամակարգ, պատմական հիշողություն, մշակութային գործառույթներ:

Մարդկային գործունեության յուրաքանչյուր բնագավառում մեծ ուշադրություն է դարձվում անցյալի ժառանգության պահպանմանը: Այն, ինչ ճանաչում ենք՝ մեր ապրումները, տպավորությունները, կամ շարժումները մեր հիշողության մեջ թողնում են ինչ-որ հետք, որը կարող երկար ժամանակ պահպանվել և համապատասխան պայմանների դեպքում նորից ի հայտ գալ ու դառնալ գիտակցության առարկա: Գուցե այդ է պատճառը, որ դարեր շարունակ գիտնականների ուշադրության կենտրոնում է եղել հիշողության հիմնախնդիրը: Հիշողության հետ է կապված անցյալի ժառանգության պահպանումը, վերարտադրությունն և փոխանցումը: Դրա շնորհիվ է, որ կաթիլ առ կաթիլ կուտակվում է տեղեկատվությունը, չկորցնելով նախորդի տարրերը: «Առանց

հիշողության մենք կլինեինք ակնթարթային գոյություններ: Մեր անցյալը կլիներ մահացած ապագայի համար, իսկ ներկան... անհետ կկորչեր անցյալում»<sup>1</sup>:

Փիլիսոփաների կողմից հիշողությունն ուսումնասիրվել է ոչ միայն անհատական մակարդակում, այլև՝ սոցիալական: Սոցիալական հիշողության երևույթի հիմնավորման դժվարությունն այն է, որ այն պատկանում է սոցիալական իրականությանը, բայց միաժամանակ օժտված է ինքնուրույնությամբ: Այն սերունդների մշակութային արժեքների փոխանցման միջոց է: Սոցիալական հիշողությունը սոցիալական իրականության հիմնաքարն է, որը գոյություն ունի անհատական հիշողության հետ և հանդես է գալիս որպես սոցիալական փորձի փոխանցման մեխանիզմ: Այն համատեղելի է ֆիզիկական, հոգեբանական և կենսաբանական բնութագրերի հետ: Սոցիալական հիշողությունն ինքնուրույն երևույթ է, որը գոյություն ունի սոցիալական իրականության մեջ, ունի իր կառուցվածքը և զարգացման ընթացքը: Հիշողությունը կապող օղակ է սուբյեկտի պատկերացումների և մտածողության միջև: Այն կապված է անցյալի կերպարների պահպանման, ինչպես նաև գիտակցության մեջ այդ կերպարների վերարտադրման և վերակառուցման հետ: Սոցիալական հիշողությունը հանդես է գալիս որպես մարդու մշակութային և սոցիալական գործունեության եղանակ: Դրա միջոցով սուբյեկտը պահպանում է անցյալը և կառուցում ապագան:

Սոցիալական և պատմական հիշողությունները համակարգողը մարդն է, մարդակային հանրությունը: Նրանք հաշվարկելով ժամանակավորը և հավերժականը, կառուցում են իրենց հարաբերությունները բնության և սոցիալական աշխարհի հետ: Պատմականորեն փոխվում են վարվելակարգի /ռեգլամենտ/ ձևերը. սոցիոմշակութային, կրոնական նորմերը, միջազգային սահմանադրությունը: Սոցիոմշակութային կառույցները հանդիսանում են որպես ինքնակարգավորող համակարգ՝ կարգավորելով հասարակության ներսում հետաքրքրությունները: Հին արժեհամակարգի քայքայման հետ պահանջարկ է առաջանում նոր աշխարհայացքային մոտեցման: Սոցիալական հիշողությունը դառնում է ղեկավարող այն պահից, երբ մարդն իրեն զգում է ոչ միայն որպես փակ կլանի անդամ, այլև լիարժեք սոցիալական սուբյեկտ, որը ինքնուրույն որոշում է պատմական կեցության չափագիծը: Ժամանակակից սոցիալական իրականությունը տարբեր իրականությունների միահյուսված ձև է: Սոցիալական հիշողությունը մշակութային արժեքների պահպանումն է և սերնդից-սերունդ փոխանցման միջոցը: Հիշողությունը կեցությանը մոտենում է արժեքային տեսանկյունով: Հիշողության փիլիսոփայականացումը մատնանշում է հոգևեր պատրաստվածություն՝

<sup>1</sup> Немов Р.Ц., Общие основы психологии, книга 1, „Просвещение“, М., 1994, с.184.

«պահպանելու հուշը ինչպես անհատի կողմից, այնպես էլ հասարակության, որոնք ընդունակ են անցյալը վերածնելու վերհուշի միջոցով, որի շնորհիվ տեղի է ունենում արդիականացման գործընթացը՝ անցյալը կապելով ժամանակակից սոցիոմշակույթի հետ»<sup>2</sup>: Անցյալը և ներկան չեն առանձնացվում, դրանք փոխկապակցվում են միմյանց հետ: Հիշողությունն անցյալը դարձնում է իրական արժեք, մեր կյանքի նշանակալի մաս, կարևորագույն հասարակական իրադարձության առաջ մղող, շարժիչ ուժ:

Հանդիսանալով տարբեր սոցիալական կապերի հիմնական տարրը, սոցիալական հիշողությունը իր ազդեցությունն է ունենում անհատի և կոլեկտիվի զարգացման վրա: Ձևավորելով անհատի և սոցիալական խմբերի փոխազդեցության տիպաբանությունը, այն իր վճռորոշ ազդեցությունն է թողնում թե՛ ընտանիքի, թե՛ ազգի և թե՛ էթնոսի վրա: Ժամանակակից տարաբնույթ իրականության մեջ նկատվում է դարերից եկող ավանդական արժեքների մոռացությունը: Անցյալը դիտվում է որպես սոցիալական հաղորդակցության և փոխանցման միջոց: Հիշողությունը կապված է հասարակության հոգևոր և մատերիական ավանդական եղանակների հետ: «Ավանդույթների ոչնչացումը առանձնացնում է սոցիալական օրգանիզմը իրեն պահպանող կեղևից և բերում է այդ համակարգի աստիճանական անկման /դեգրադացիա/»<sup>3</sup>: Մշակութային ճգնաժամը ստիպում է անդրադառնալու նաև սոցիալ-պատմական փորձին, որը մեզ է փոխանցվում սոցիալական հիշողության միջոցով: Սոցիալական հիշողությունը սերտորեն կապված է մշակույթի զարգացման հետ: Ժամանակակից սոցիալական փոփոխության մեջ սոցիալական հիշողության կատեգորիան դառնում է ավելի արդիական: Սա առաջին հերթին պայմանավորված է սոցիալական գործընթացներում սուբյեկտի կարգավիճակի վերանայումով և նրա վերագնահատումով: Եթե անցյալում հիշողությունը ուղղված էր միայն անցյալի վերարտադրությանը, ապա այժմ այն կապվում է ներկայի արդիականացման և մարդու գիտակցության մեջ ապագայի ծրագրավորման հետ: Այսօր սոցիալական հիշողության սուբյեկտը օտարվել է տնտեսական, սոցիալական և հոգևոր ձևափոխումներից: Մի կողմից մարդը ձևավորում և կազմակերպում է կյանքը անհատական հարթության վրա, բայց մյուս կողմից անընդհատ իր վրա զգում է հասարակության ազդեցությունը: Այն փաստը, որ բազմաթիվ անհատներ ունեն նույն պատկերացումներն իրենց ազգի անցյալի մասին, ցույց է տալիս, որ նրանց հիշողություններն այնքան էլ անկախ չեն մեկը մյուսից և զուտ անձնավորված դրսևորումներ են մեկ ընդհանուր կոլեկտիվ

<sup>2</sup> **Молодкина Л.В.** К вопросу о феноменологии памяти, Вестник Московского университета, 2007, N6, с.95.

<sup>3</sup> **Фукуяма Ф.** Великий разрыв, М., 2004, с.12-15.

հիշողության: Հետևաբար, դիտարկելով սոցիալական երևույթները, պետք է հիշել, որ ցանկացած սոցիալական երևույթի տարբեր տարրեր կան նաև անհատական կեցության մեջ: Անցյալը վերակերտվում է ելնելով ներկայի պահանջներից: Կոլեկտիվ հիշողությունները վերապրում են հասարակության ներսում տեղ գտած փոփոխությունները: Լինելով կոլեկտիվ պատկերացումների տեսության հիմնադիրներից մեկը, Ղյուրկիեյնը սոցիալական իրականության բովանդակությունը կապում էր կոլեկտիվ գիտակցության հետ: Որպեսզի ի հայտ գա անհատական պատկերացումը, բավական է մեկ անհատ, իսկ կոլեկտիվ պատկերացման համար հարկավոր է, որ մի քանի մարդիկ միավորեն իրենց գործունեությունը և այս միացումը ծնի նոր արդյունք: Ձևավորելով սոցիալական կյանքի թելը, կոլեկտիվ պատկերացումները անհատական գիտակցության համեմատությամբ հանդես են գալիս որպես արտաքին պատկերացումներ և ծագում են դրանց օրգանական միասնությունից: Արդյունքում ձևավորվում է նոր աշխարհ, որն իր ազդեցությունն է թողնում մարդու վրա: Ղյուրկիեյնն առանձնացնում է կոլեկտիվ պատկերացումների երկու ձև: «Մեկը ձևավորվում է որպես կոլեկտիվ միավորման արդյունք, իսկ մյուսը ունի որոշակի գոյության ժամկետ և օգտագործվում է մարդկանց կողմից անկախ այն բանից թե նրանք տարբեր սոցիալական ընդհանրությունում միավորվում են, թե՛ ոչ»<sup>4</sup>:

Բազմաթիվ գիտնականներ վերլուծելով 1990-ական թթ. բարեփոխումների ձախողման պատճառները, եկել են այն եզրահանգման, որ ժողովրդի տնտեսական կեցությունը վերափոխման էր ենթարկվում առանց ժողովրդի, հաշվի չառնելով ազգային մենթալիտետը և պատմական հիշողությունը, գործունեության շարժառիթների պատճառները: Այդ վերափոխումներում շեշտը դրվում էր ոչ թե բնակչության սոցիոմշակութային ավանդույթների վրա, այլ՝ անփոփոխ կենսաբանական փաստերի: «Խորապես սխալ են այն գաղափարները, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց ցանկացած եղանակով վաստակելու կապիտալ: Այն, որ կապիտալիզմը իր ձեռքը կվերցնի ամեն ինչ և շուկան կաշխատի»<sup>5</sup>: Սակայն ստացվում է հակառակը: Սկսվում է կապիտալի հոսքը Արևմուտք և ոչ մի օրենք չի կարողանում կասեցնել այն: Այստեղ չի կարող գործել և երաշխիք տալ ոչ մի իրավական նորմ: Մարդիկ հասկանում են, որ ժամանակի հետ երկրում իրադրությունը կարող է փոխվել և ստացված եկամտի միջոցների համար պետք է հաշվետու լինել: Իրավական նորմերը հակասության մեջ են մտնում բարոյականության հետ: Անկախ ժամանակից, այն վերանայվում է

<sup>4</sup> Дюркгейм Э. Социология. Ее предмет, метод, предназначение, М.: Канон, 1995, с.20.

<sup>5</sup> Сергеева О.А., Платонов Г.В., Особенности хозяйственно-экономической деятельности и менталитет народа, Вестник МГУ, ГСП-2, М., 2008, с.109.

հասարակության կողմից, հատկապես այնպիսի իրավիճակներում, երբ կյանքի լավացման համար ոչ մի նախադրյալ չկա: Եվ այստեղ ամենավտանգավորն այն է, որ մասսայական են դառնում տնտեսական հանցագործությունները: Սոցիումը դառնում է ավելի դյուրաբեկ, ավելի անձև զանգված: Սա արդեն վտանգ է ներկայացնում երկրում տիրող իրավիճակի փոփոխման: Պատմական զարգացման տարիմաստությունը /պարադոքս/ հետևյալում է. կա նպատակ, որին ձգտում է հասնել սոցիումը, դրան հասնելու միջոցներ, կա արդյունք և պատմական հիշողություն, որը չնայած դրան շեղելու բոլոր փորձերին գնալով ամրանում է: Եթե արդյունքը չի ստացվում այնպիսին, ինչպիսին սպասվում էր, հասարակական գիտակցությունը դիմում է պատմական հիշողությանը: Վերածնվում է անցյալը, բոլոր դրական և բացասական կողմերով: Այսպիսի պայմաններում պատմական գործընթացը սկսում է շարժվել հակառակ ուղղությամբ: Պատմական գործընթացից շեղվելը, առաջընթաց գաղափարներով առաջնորդվելը տալիս են իրենց արդյունքները: Իսկ հասարակությունը ամեն անգամ կանգնում է փաստի առաջ: Այն պատրաստ չի լինում այդ փոփոխություններին: Խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված գաղափարները խոչընդոտ հանդիսացան, որի վրա սայթաքեցին, չկարողացան հաղթահարել շուրջ յոթանասուն տարի քարոզվող խորհրդային պատգամները /ժողովուրդների անխախտ բարեկամություն, քաղաքացիների բարօրության մասին մտածող քաղաքական համակարգ, ամենաարդար դատական համակարգը և այլն/: Սակայն ոչ ոք չի փորձում ճշտել հասարակության կեցության օրինաչափությունը: «Համակարգը, որը ձևավորվում է ոչ ճիշտ սոցիոմշակութային փոխանցման մեխանիզմով, որը կտրում է ժառանգորդման հաջորդականության թելը, ստիպված է լինում փոփոխվել փոքր բոլորապտույտներով /ցիկլ/»<sup>6</sup>: Որքան կարճ է ավանդույթը, այնքան հեշտ է սկսել նոր փուլ: Սակայն ընդհանուր քաղաքակրթության զարգացվածության հիմքը պահպանվում է որպես որոշակի ձուլամայր /մատրիցա/, որպես վերափոխված կեցություն և դուրս գալով հերթական հեղափոխական ձևափոխումներից, համակարգը վերարտադրվում է՝ անցյալի երևույթները ինչ-որ չափով ձևափոխելով, բայց սրա հետ միաժամանակ նա պահպանում է կոնկրետ գործառնական և կառուցվածքային բնութագրերը: «Սոցիալական ինստիտուտների փոխանցում չկա: Բայց կա դրանց խորհրդանշանականությունը»<sup>7</sup>: Հասարակության ցանկացած փոխակերպման դեպքում պահպանվում է արժեքային կորիզը:

<sup>6</sup> Նույն տեղում՝ էջ 108.

<sup>7</sup> **Оруджев М., Кузнецова Т.В.** Культура и цивилизация. Вестник МГУ, N4, 2007, с.64

Վերջին ժամանակներս, հակամարտությունների լուծման ուղիների որոնումներում, հաճախ դիվանագետները խորհուրդ են տալիս մոռանալ հարևանների հետ հարաբերություններում առկա անցյալը, ինչի շնորհիվ միայն կարելի է պայմանավորել իրական առաջընթացը: Սա նշանակում է, որ նրանք գիտակցում են հիմնախնդրի շուրջ առկա կոլեկտիվ ու պատմական հիշողության գործոնի նշանակալի դերը ազգային ինքնության կառուցվածքում: Ցանկացած էթնիկ ընդհանրության համար անցյալի հիշողությունը հարստություն է: Սակայն որոշ դեպքերում այն կարող է «բեռ» դառնալ, որի թրթափելը շատ դժվար է: Պատմական իրադարձությունների բերումով այնպես է ստացվել, որ հայ ժողովրդի պատմական հիշողությունը ցավի և կորստի հիշողություն է: Եվ ինչպես աշխարհի շատ ժողովուրդներ չեն հրաժարվում իրենց ինքնության մաս կազմող «անցյալի բեռից», այնպես էլ հայ ժողովուրդը չի կարող հրաժարվել իր դժվարին անցյալի հիշողության ժառանգությունից: Ցեղասպանության հարցի հաճախակի արծարծումը և դրան անընդհատ առաջնայնություն տալը, կարծես բացասական հետևանքներ է թողնում մեր քաղաքականության, տնտեսության և մշակույթի վրա: Այսօր մեր տնտեսական շրջափակումը նույնպես կապում են այդ հիմնախնդրի հետ: Սակայն միաժամանակ չպետք է մոռանանք, որ ցեղասպանության ճանաչման փաստը ազգային անվտանգության խնդիր է:

Հասարակագետը կարևորում է այն, թե ինչի՞ հետ գործ ունի՝ անհատի հիշողության, թե կոլեկտիվ հիշողության հետ: Արդյո՞ք հիշողությունը կրում է անհատական, թե՞ կոլեկտիվ բնույթ: Այսպիսի իրադրության մեջ խոհածության /ռեֆլեքսիա/ հին ավանդույթը հակադրվում է ավելի երիտասարդ ավանդույթի՝ օբյեկտիվության հետ, և անհատական և կոլեկտիվ հիշողությունները դառնում են մրցակիցներ: Սակայն նրանք մրցակիցներ են ոչ միայն նույն հարթության վրա, այլ նաև տարբեր ոլորտներում: Այստեղ փիլիսոփայության խնդիրը փորձելն է հասկանալ, թե ի՞նչ ձևով է պատմությունը ամբողջացվում ֆենոմենոլոգիայի հետ: Սահմանափակելով ներքին գործունեության պատճառների ուսումնասիրումը, պետք է կամուրջ գցել դրանց միջև և հաշվի առնել այն հանգամանքը, որ ամեն դեպքում երկու հիշողություններն էլ անցել են տարբեր ճանապարհներ, բայց միևնույն ժամանակ տրամախաչվել են: «Հասարակության կոլեկտիվ հիշողությունը լրիվ տարբեր է այդ հասարակության բազմաթիվ անհատ անդամների անձնական հիշողությունների հանրագումարից, քանի որ ներառում է միայն այն հիշողությունները, որոնք սովորաբար կիսվում են հասարակության բոլոր

անդամների կողմից»<sup>8</sup>: Կոլեկտիվ հիշողությունը ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունը:

Միևնույն էթնիկ հանրությանը պատկանող մարդկանց միավորող միջոցներից մեկն **ընդհանուր** հիշողությունն է: Այն էթնիկ ինքնությունը ձևավորող համակարգային բաղադրիչ է: Ազգային ինքնությունների ձևավորման գործընթացի ամենաբնութագրական գծերից մեկն անցյալի իրողությունների, կոլեկտիվ ու պատմական հիշողության դերի առանձնահատուկ կարևորումն է:<sup>9</sup> Մ.Էլիադեն նկատի ունենալով հենց այդ հանգամանքը, գրում է թե ազգային պատմության նկատմամբ կիրքը մի ընդհանուր միտում է, որը ձևավորվող ազգերի կողմից ծառայեցվում է ապացուցելու, որ իրենք ամենահինն են և ազնվարյունը:<sup>10</sup> Էթնիկ հիշողությունը ևս տարաշերտ է, այն կազմված է պատմական և կոլեկտիվ հիշողություններից: Էթնիկ հիշողության մի մասն են կազմում նյութական մշակույթի այն կոթողները, որոնց հավաքական կերպով անվանում են «հուշարձան»: Կառուցված լինելով տարբեր իրադարձությունների և հանուն որոշակի ակնկալիքների, դրանք խտացված տեղեկություն են պարունակում այդ իրողությունների մասին, որոնք կոթողի ինքնության մաս հանդիսանալու հետևանքով նպաստում են նաև ինքնության համար այդ տեղեկատվության կարևորության ծագմանը կամ դրա աճին: Որպես էմպիրիկ առարկա, այն չի կարող երևալ, այն միշտ երևում է ելնելով համակարգից, կամ մյուս երևույթների հետ շփվելուց: Դրա կեցությունը միջնորդավորվում է տվյալ դարաշրջանի գաղափարներով, գեղագիտական ճաշակով, սոցիոմշակութային ողջ տարրերով: Հուշարձանը ոչ միայն հիշողության ուղղակի կրող է կամ մարմնացում, այլև հանդես է գալիս նաև որպես հիշողություններ և մշակութային դաշտ արարող:

Թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ և թե՛ պատմական հիշողությունը համատեղ են աշխատում հասարակության մեջ: Հասարակությունը նյութ է տալիս խմբի հիշողությանը և խթանում անհատին՝ վերհիշելու առանձին իրադարձություններ: «Մեր հիշողությունները մնում են կոլեկտիվ և հիշեցնում են մեզ մյուսների կողմից, նույնիսկ եթե միայն մենք ենք լինում իրադարձությունների մասնակիցներ կամ տեսնում ենք դրանց առնչվող ինչ-ինչ բաներ: Իրականում մենք երբեք միայնակ չենք: Անցյալի որևէ՝ իրադարձության շուրջ հիշողության վերակառուցումը պետք է սկսվի միմյանց հետ կիսվող գաղափարներից կամ տվյալներից»<sup>11</sup>: Հիշողությունը

<sup>8</sup> Гуддѐнс Э. նշված աշխատ., էջ 98:

<sup>9</sup> Элиаде М., Аспекты мифа, М., ИНВЕСТ-ППП, 1995, с.181-182.

<sup>10</sup> Նույն տեղում՝ էջ 184:

<sup>11</sup> Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Եր., «Նորավանք», 2006, էջ 32:

ուղղորդում է մեզ, երբ կորցնում ենք կապը մեր անցյալի հետ: Հիշողությունը /վերհիշում/ լայն առումով անցյալի վերակառուցումն է ներկայից վերցրած տվյալների միջոցով, մի վերակառուցում, որ նախապատրաստված է ավելի վաղ ժամանակների վերակառուցումներով, որտեղ անցյալի պատկերացումները արդեն փոխված են: Անցյալի իրադարձությունների ու պատկերացումների մասին ժամանակի ընթացքում պարբերաբար նոր տվյալներ են կուտակվում: Ընդլայնվում են իմացության շրջանակները, ինչի հետևանքով կարող է ձևավորվել նոր հիշողություն, որը կարող է ավելի մոտ թվալ իրականությանը: Փոխվում են նաև այդ իրականությունը կրող խմբերը, նրանց հայացքները: «Եթե կոլեկտիվ հիշողությունը իսկապես անցյալի վերակառուցումն է, եթե այն հարմարեցնում է հին փաստերի մասին պատկերացումները ներկայի կարծիքներին ու հոգևոր պահանջունքներին, ապա այդ պարագայում այդ փաստերի ծագման հարցը պետք է լինի երկրորդական, քանի որ անցյալի ռեալությունն այլևս անցյալում չէ»<sup>12</sup>: Անցյալը ստեղծվում է ներկայում: Այդ պատճառով էլ այն հարմարվող է: Անցյալի պատկերացումները փոխվում են ժամանակի ընթացքում: Համաձայն հասարակական խնդիրների ու կարիքների ենթակառուցվածքների փոփոխության փոխվում են պատմական իրադարձությունների նշանակությունները: Ցանկացած պատմական իրադարձություն տարբեր կերպ է գնահատվում տարբեր սերունդների կողմից: Անցյալի դրույթները, Է.Ղյուրկիեյմի համոզմամբ, մշակվում են պարբերական բնույթ կրող տարեդարձային նշումների, հիշատակումների ծեսերով, որոնց գործառույթը ոչ թե անցյալի ձևափոխումն է՝ պարտադրելով նրան ծառայել ներկային, այլ անցյալի վերաարտադրումը, նրա կենդանի մնալուն օժանդակելը:<sup>13</sup> Ըստ ավանդույթի մասին Էդվարդ Շիլսի դրույթի՝ անցյալն է կերտում ներկան<sup>14</sup>: Նրա համոզմամբ տարեդարձային նշումները, հիշատակումները մի ճանապարհ են պահանջելու, որ անցյալը պետք է ինչ-որ բան առաջարկի ներկային, լինի զգուշացում կամ մողել. արագ փոփոխությունների ժամանակներում անցյալը տրամադրում է անհարժեշտ հանձնարարություններ ինքնության գործողությունների համար: Հիշողությունները հող են ստեղծում իրենց իսկ հավերժացման համար: Բերգսոնի խոսքերով. «մեր կյանքի ամենօրյա իրադարձությունները հանդես են գալիս հիշողության ձևով, իսկ հիշողությունը բաց չի թողնում ոչ մի մանրուք և ամեն մի փաստին ցույց է տալիս իր տեղն ու ժամանակը»<sup>15</sup>: Հիշել, նշանակում է ոչ միայն

<sup>12</sup> Նույն տեղում՝ էջ 43:

<sup>13</sup> Дюркгейм Э. նշվ. աշխատ., էջ 38:

<sup>14</sup> Shils E., Tradition. London, 1989, p.15.

<sup>15</sup> Бергсон А., Материя и память, с 207-208.



ընդունել, ստանալ անցյալի կերպարը, այլև փնտրել, ինչ-որ բան անել: Սա նշանակում է, որ հիշողությունը աշխատում է:

Որևէ երկարաժամկետ առաքելություն՝ կապված սերունդների շարունակական գործունեության հետ, ենթադրում է այդ առաքելության գիտակցման պահպանում և անադարտ փոխանցում: Հակառակ պարագայում առաքելությունն ընդհատվում է և խափանվում: Իսկ պահպանել և փոխանցել, նշանակում է սերնդեսերունդ համակողմանի իրազեկել նախորդ ճշմարիտ պատմությունը, դաստիարակել և ուսուցանել այնպես, որ յուրաքանչյուր սերունդ օրգանապես զգա մի ընդհանուր պատմական շղթայի մեջ իր՝ որպես հերթական օղակի անելիքն ու պատասխանատվությունը: Ակնհայտ է, որ ճշմարիտ սերնդափոխության հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե մարդու հարափոփոխ անձնական նախասիրությունները, այլ նախնիներից ժառանգած կենսափորձն ու համամարդկային արժեքները:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рукёр П., Память, история, забвение, „Наука”, М.,2004.
2. Гидденс Э., Устройство общества: Очерк теории структуризации. М., Академический Проект, 2005.
3. Немов Р.Ц., Общие основы психологии, книга 1, „Просвещение”, М., 1994.
4. Молодкина Л.В. К вопросу о феноменологии памяти, Вестник МУ, 2007, N6.
5. Сергеева О.А., Платонов Г.В., „Особенности хозяйственно-экономической деятельности и менталитет народа”, Вестник МГУ, ГСП-2, М. 2008.
6. Шпенглер О. Закат Европы. М., Айрис-пресс, 2004г., Т.1
7. Фукуяма Ф. Великий разрыв, М., 2004.
8. Дюркгейм Э. Социология. Ее предмет, метод, предназначение. М., Канон, 1995 .
9. Оруджев М., Кузнецова Т.В. Культура и цивилизация. Вестник МГУ, N4, 2007.
- 10.Элиаде М., Аспекты мифа, М., ИНВЕСТ-ППП, 1995.
- 11.Мотрошилова Н.В. Мыслители России и философия Запада. М., 2006
- 12.Մարության Հ.,«Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում», Եր., «Նորավանք», 2006
- 13.Shils E., Tradition. London, 1989.

*ПАМЯТЬ КАК СОЦИОКУЛЬТУРНЫЙ МЕХАНИЗМ НАСЛЕДИЯ*

Интерес к исследованию феномена памяти обусловлен рядом взаимодействующих обстоятельств. Социальная память выступает транслятором ценностно-смысловых характеристик культуры от одного поколения к другому, определяет многомерность и многоуровность феноменов культуры. Фундаментальное значение памяти состоит в том, что она, имея сложную структуру, задаёт основу многомерности существования различных смыслов и ситуаций. Являясь фундаментальным элементом различных социальных связей, социальная память оказывает влияние на развитие человека и коллектива. Формируя социальную типологию личности и социальных групп через их взаимодействие, она оказывает решающее влияние на различные социальные феномены коллективности: семью, нацию, этнос, народ. Важность темы обусловлена современным кризисным состоянием общества, в котором наблюдаются разрыв вековых связей, отрыв от корней, забвение традиционных ценностей. Современный кризис так или иначе заставляет обращаться к социально-историческому опыту, транслятором которого выступает память.

*ALAVERDYAN NELLY*

*YEREVAN STATE UNIVERSITY, FACULTY OF PHILOSOPHY AND PSYCHOLOGY*

Memory as socio-cultural heritage mechanism

The article refers to the role and place in every sphere of human activity. Preservation of heritage of the past, reproduction and transition of cultural values of generation is high pointed. Social memory is especially stressed which is regarded as a way of cultural and social human activity. The combination of labor of individual, collective and historical memory in the society is being covered. Memory makes the past as a real value, essential part of our life, motivating power of the most important social events.

